ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/03» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/03-01» պայմանագրում (ասուհետ՝ Պայմանագիր) փոփոխություն կատարելու մասին 16.04.2021թ. կնքված Համաձայնագիր N 2-ում 2021 թվականի մայիսի 14-ին կատարված լրացման վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված լրացումը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Համաձայնագիր N 2-ով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում:

Փոփոխության նկարագրություն՝

Համաձայնագիր N 2-ի 1-ին կետը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 1.3 ենթակետով.
«1.3 Սույն համաձայնագրի սույն կետի 1.1 ենթակետում նշված աշխատանքների կատարման ժամկետ սահմանել սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնելու օրվանից՝ 61 օր»:

Փոփոխության հիմնավորում՝

<u>Պայմանագրի 8.5, 8.6 կետեր:</u>

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
18.12.2020Թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/03-01» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
16.04.2021Թ. ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2-ՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «14» 05 2021թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Եսայանի (այսուհետ՝ Կապալառու), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 18.12.2020թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/03-01» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 16.04.2021թ. կնքված Համաձայնագիր N 2-ը (այսուհետ՝ Համաձայնագիր N 2)՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Համաձայնագիր N 2-ի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.3 ենթակետով.
«1.3 Սույն համաձայնագրի սույն կետի 1.1 ենթակետում նշված աշխատանքների կատարման ժամկետ սահմանել սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնելու օրվանից՝ 61 օր»:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի և Համաձայնագիր N 2-ի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	***<<ԱԳԱԹ-777» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Շիրակի փակուղի 4
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01807983
Հ/Հ՝ 900011025757	Հ/Հ՝ 1150000285850100
<<ՊՏ գործառնական վարչություն	<<Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Դ. Եսայան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ